«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77 13-27-00

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

Ուսանողական գիտական ընկերության

(2021-2022թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան «09» սեպտեմբեր, 2021թ.

№	Նախատեսվող միջոցառման բնույթը	Խորագիրը / Թեման	Անցկացման օրը / շաբաթը	Համառոտ նկարագրությունը
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ				
1.	Էսսեների մրցույթ	«Մեր հոգու պատերազմը», «Նամակ քեզ», «Ժամանակի մեքենա», «Ներկայի, անցյալի ու ապագայի միջև»	-	Նպատակն է մրցույթի միջոցով բացահայտել շնորհալի ուսանողներին և հանրությանը ներկայացնել նրանց մտքի արգասիքները: Հաղթողին կընտրի հատուկ հանձնաժողովը, մասնակիցներից երեքը

				կպարգևատրվեն պատվոգրերով, իսկ առաջին հորիզոնական զբաղեցնողը կխրախուսվի նաև անակնկալ նվերով:
2.	Word, Excel, Power Point ծրագրերի ուսուցում		-	Նպատակն է ուսանողներին ներկայացնել Word, Excel, Power Point ծրագրերը, տալ դրանց վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, սովորեցնել, թե ի՞նչ եղանակով պետք է կիրառել՝ անհրաժեշտ արդյունքին հասնելու համար: Այս ծրագրերի իմացությամբ ուսանողներն ավելի դյուրին կերպով կկարողանան գրել իրենց ռեֆերատները, հետազոտական, ինքնուրույն, ավարտական աշխատանքները և այլն:
3.	«Ուսանողի դերը			Իվենթի նպատակն է

	պետության կայացման գործում» թեմայի շրջանակներում իվենթ			ներկայացնել ուսանողի դերի կարևորությունը պետության զարգացման, կայացման գործընթացում, որովհետև յուրաքանչյուր կառույցի կայացման ակունքներում կանգնած է կրթված ու բանիմաց մարդը:
4.	Այց ԵՊՀ, հանդիպում տեղի ուսանողների հետ:			Չափազանց կարևոր է Մայր բուհի և մասնաճյուղի սերտ կապն ու համագործակցությունը, ուստի անհրաժեշտ է կազմակերպել հանդիպումներ, մշակել ծրագրեր, որոնցով ավելի կամրապնդվեն հարաբերությունները: Այս նպատակով նախատեսվում է այց ԵՊՀ: Կկազմակերպվի նաև բանախոսություն:
5.	Բանահավաքչություն	-		Նպատակն է ուսումնասիրել, «պեղել» և հանրությանը

				ներկայացնել մեր ժողովրդի բառն ու բանը: Ուսանողները կհավաքեն ավանդություններ, զրույցներ, երգիծական պատմություններ, խաղիկներ, երգեր, օրհնանքներ, անեծքներ և այլն, որոնց միջոցով աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական և այլ տեղեկություններ կփոխանցեն լսարանին:
6.	Ծրագիր «Օտար լեզուներ» մասնագիտությունում սովորող ուսանողների համար			
7.	Ծրագիր «Հոգեբանություն» մասնագիտությունում սովորող ուսանողների համար			

Տնտեսագիտության ֆակուլտետ				
8.	Գրքի շնորհանդես	Աշխահագրական-տերմինաբանական բառարանների շնորհանդես	Սեպտեմբերի 15-25	Շնորհանդեսի ընթացքում կներկայացվի «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի» վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանի հրատարակած «Աշխարհագրական-երկրագրագական եզրույթների և հասկացությունների հայ-արաբերեն, հայ-թուրքերեն, հայ-պարսկերեն բառարանները»։Կընդգծվի նրանց կարևորությունը մասնագիտական թարգմանությունների գործում։
2.	Արշավ	Ճանաչողական այցերը կկրեն պրակտիկ բնույթ «Զբոսաշրջություն» մասնագիտության համար	Սեպտեմբերի 20-30	Այցի ընթացքում ուսանողները կծանոթանան Տավուշի մարզի հինավուրց պատմամշակութային վայրերից մեկին՝

				Կիրանցի վանքին, որը շատերի կողմից մոռացության է մատնված։ Դեպի Կիրանցի վանք իրականացվող արշավի ընթացքում Զբոսաշրջություն մասնագիտության ուսանողները բազմալեզու(հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և այլն) ձևաչափով կներկայացնեն վանքի պատմությունը, տեղադիրքը, զբոսաշրջային գրավչությունը,վանքի ունեցած դերը մարզի զբոսաշրջության զարգացման գործում,որի արդյունքում նրանք կխորացնեն զբոսավարման իրենց հմտությունները,ձեռք կբերեն զբոսաշրջիկների առջև ելույթ ունենալու փորձ։
3.	Ինտելեկտուալ խաղ 1	«Զբոսաշրջություն»	Հոկտեմբերի 5-18	Խաղն ամբողջությամբ կանցկացվի օնլայն տարբերակով՝ quiziz.com կայքի միջոցով: Կլինեն մասնագիտական ոլորտին վերաբերող բազմաբնույթ հարցեր, որոնք էլ կստուգեն ուսանողների մասնագիտական գիտելիքները։ Արդյունքներն ամփոփելուց հետո հաղթող(ներ)ը կստանա(ն) պատվոգիր,

				իսկ մնացած մասնակիցները՝ մասնակցության հավաստագրեր:
4.	Ինտելեկտուալ խաղ 2	«Մոտիվացիոն խաղեր»	Նոյեմբերի 5-20	Խաղի ընթացքում մասնակիցները խաղի առաջին փուլում կլուծեն տնտեսագիտական բառերից կազմված խաչբառ, իսկ երկրորդում՝ quiziz.com կայքի միջոցով կպատասխանեն մասնագիտական հարցերի: Խաղի վերջում մասնակիցները կստանան հավաստագրեր, հաղթողը՝ պատվոգիր:
5.	Այց «One way group»	Ճանաչողական այց և մոտիվացիոն զրույց-քննարկում:	Նոյեմբերի 5-15	Հանդիպման ընթացքում ուսանողները կայցելեն «One way group», կունենան քննարկում աշխատակազմի հետ և կծանոթանան Հայաստանում ներգնա զբոսաշրջային ծառայություններ մատուցող խոշորագույն ընկերության գործունեությանը, կստանան իրենց հուզող որոշ մասնագիտական հարցերի պատասխաններ:
6.	Քննարկում	Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի տնտեսական ռազմավարությունների համեմատություն:	Նոյեմբերի 10-25	Քննարկման ընթացքում հրավիրյալ բանախոսի կողմից կներկայացվեն Ադրբեջանի, Թուրքիայի, Հայաստանի տնտեսական քաղաքականությունների հիմնական բնորոշ գծերը,

				վեր կհանվեն դրական և բացասական կողմերը։ Վերջում կդիտարկվեն ուսանողների կարծիքները և դիրքորոշումները, կքննարկվեն հնարավոր հետագա զարգացումներն ու մարտահրավերները։
7.	Սեմինար (վեբինար)	SMM, Մարքեթինգ	Նոյեմբերի 25-30	Հրավիրյալ բանախոսը ուսանողներին կներկայացնի մարքեթինգի հիմնական հասկացությունները, այնուհետև առավել մանրամասն սոցիալական մեդիայի մարքեթինգի գործիքակազմը, արդիականությունը։
Բնական գիտությունների ֆակուլտետ				
1.	Սեմիմար-զեկույց	Տրամաբանական խնդիրներ	23.11	Կներկայացվեն խնդիրներ իրենց մաթեմատիկական, ալգորիթմային և ծրագրային լուծումներով։
2.	Ինտելեկտուալ խաղ	Ընդհանուր գիտելիքների ստուգում	30.11	Կլինի 3 փուլով։ Առաջին փուլում կտրվի 20 հարց։ Ավելի բարձր միավոր հավաքած 6 մասնակիցները կանցնեն հաջորդ փուլ։ Երկրորդ փուլում կտրվի տրամաբանական հարցեր։ Այն 3 մասնակիցները, ովքեր կպատասխանեն առավելագույն թվով հարցերի կանցնեն երրորդ փուլ։ Երրորդ

				փուլում կտրվի մասնակիցների մասնագիտությանը համապատասխանող հարցեր։ Հաղթողի կոչում կստանա այն մասնակիցը, ով կունենա ամենաշատ ճիշտ պատասխանները։
3.	ԷՀՄ-ի դասընթաց	c++-ի հիմունքներ	16.11	Կտրվեն c++ ծրագրավորման լեզվի հիմնական գիտելիքներ։
4.	Ծրագրավորման մրցույթ	c++-ի հիմունքներ	1.12	Կլինի 3 տեսական և 3 ծրագրային խնդիր։Կհաղթի ավելի շատ ճիշտ պատասխան ունեցող մասնակիցը։
5.	Այց ԹՈՒՄՈ, Կենտրոնական բանկ	Ծանոթություն	6.12	Կայցելենք ԹՈՒՄՈ, կծանոթանանք անցկացվող դասընթացներին և կտեսնենք ուսանողների աշխատանքները։ Կկատարենք այց Կենտրոնական բանկ։
6.	Այց ֆրանսիական և սլավոնական համալսարաններ	Ծանոթություն	19.12	Կլինի ընդհանուր ծանոթություն համալսարաններին
7.	սեմիմար-զեկույց	տրամաբանական խնդիրներ	14.12	կներկայացվեն խնդիրներ իրենց մաթեմատիկական, ալգորիթմային և ծրագրային լուծումներով
Խմբակների դասընթացներ				
«Բանասերների խմբակ»				

8.	Ժամանակակից հայոց լեզու	<<CV, ինքնակենսագրական>>	Սեպտեմբեր ամիս, առաջին շաբաթ	Դասընթացին նախատեսվում է ներկայացնել CV և ինքնակենսագրական գրելու կարգը, դրանց տարբերություններն ու կիրառման ոլորտները:
9.	Կինոդիտում		Սեպտեմբեր ամիս, երկրորդ շաբաթ	Հանդիպմանը նախատեսվում է դիտել որևէ մասնագիտական ֆիլմ:
10.	Գրականություն	Գրքի քննարկում	Սեպտեմբեր ամիս, երրորդ շաբաթ	Նախատեսվում է քննարկել որևէ հեղինակի ստեղծագործություն մասնակիցների ընտրությամբ:
11.	Գրականություն	<<Թանգարանային ուսումնասիրություն>>	Սեպտեմբեր ամիս, չորրորդ շաբաթ	Սեմինարին նախատեսվում է ներայացնել տարբեր շրջաններում գտնվող պատմամշակութային վայրեր, որոնք առնչվում են հայ մեծերին: Կխոսվի դրանց ստեղծման պատմության ու կարևորության մասին:
12.	Ժամանակակից հայոց լեզու	<<Կետադրություն>>	Հոկտեմբեր ամիս, առաջին շաբաթ	Դասընթացին նախատեսվում է ուսումնասիրել հայոց լեզվի կետադրական կանոնները, նախադասության առանձին անդամների կետադրությունը:
13.	Ժամանակակից հայոց լեզու	<<Կետադրություն>>	Հոկտեմբեր ամիս, երկրորդ-երրորդ շաբաթ	Սեմինարին նախատեսվում է կատարել կետադրական նշանների իմացությունն ստուգող և ամրապնդող վարժություններ և խաղեր:

14.	Գրական հանդիպում	<<Բանաստեղծն ու ժամանակակից երիտասարդը>>	Հոկտեմբեր ամիս, չորրորդ շաբաթ	Նախատեսվում է իրականացնել հանդիպում ժամանակակից որևէ գրողի հետ, լսել նրա խոսքը, տալ հուզող հարցեր:
15.	Գրականություն	Գրքի քննարկում	Նոյեմբեր ամիս, առաջին շաբաթ	Նախատեսվում է քննարկել որևէ հեղինակի ստեղծագործություն մասնակիցների ընտրությամբ:
16.	Կինոդիտում		Նոյեմբեր ամիս, երկրորդ շաբաթ	Հանդիպմանը նախատեսվում է դիտել որևէ ժամանցային ֆիլմ:
17.	Գրականություն	<<Թանգարանային ուսումնասիրություն>>	Նոյեմբեր ամիս, երկրորդ-երրորդ շաբաթ	Սեմինարին նախատեսվում է ներայացնել տարբեր շրջաններում գտնվող պատմամշակութային վայրեր, որոնք առնչվում են հայ մեծերին: Կխոսվի դրանց ստեղծման պատմության ու կարևորության մասին:
18.	Արվեստ	<<Արվեստի ճյուղերը>>	Նոյեմբեր ամիս, չորրորդ շաբաթ	Սեմինարին նախատեսվում է ներկայացնել արվեստի ճյուղերը, ուսումնասիրել գրականության և արվեստի մյուս այն ճյուղերի կապը, որոնցով կարող է դրսևորվել որևէ գրական ստեղծագործություն: Կլինեն տեսական օրինակներ:
19.	Գրականություն	Գրքի քննարկում	Դեկտեմբեր ամիս,	Նախատեսվում է քննարկել որևէ հեղինակի ստեղծագործություն մասնակիցների

			առաջին շաբաթ	ընտրությամբ:
20.	Գրական հանդիպում	<<Բանաստեղծն ու ժամանակակից երիտասարդը>>	Դեկտեմբեր ամիս, երկրորդ-երրորդ շաբաթ	Նախատեսվում է իրականացնել հանդիպում ժամանաակից որևէ գրողի հետ, լսել նրա խոսքը, տալ հուզող հարցեր:
21.	Կինոդիտում		Դեկտեմբեր ամիս, չորրորդ շաբաթ	Հանդիպմանը նախատեսվում է դիտել որևէ մասնագիտական ֆիլմ:
«Պատմաբանների խմբակ»				
22.	Արցախյան ազատամարտ	Սկզբնավորումը: Գաղափարախոսությունը: Ռազմական գործողությունները: Միջազգային հանրության արձագանքը: (Սոսե Ջանինյան)	Սեպտեմբեր ամիս, երկրորդ շաբաթ	Նախատեսվում է մանրամասնությամբ ուսումնասիրել թեման և իրականացնել քննարկում: Փորձել, առավելապես ուշադրություն դարձնել ռազմարվեստին:
23.	Նոր և նորագույն շրջանի հայկական մշակույթ	Երգ: Պար: Արհեստի և արվեստի զանազան ճյուղերը: Ավանդույթների պահպանումը: Կրոնի ազդեցությունը: (Մերի Բեգինյան)	Սեպտեմբեր ամիս, չորրորդ շաբաթ	Նախատեսվում է ազգային արժեքների պահպանման նկատառումներով իրականացնել մեզ փոխանցված մշակույթի ուսումնասիրություն: Կանդրադառնանք երաժշտությանը, պարին անգամ հագուստին և կփորձենք գտնել տարբերակներ հասարակության շրջանում ազգային մշակույթի հանդեպ հետաքրքրության մեծացման համար:

24.	Թալիբան շարժում	Ձևավորումը: Նպատակները: Գաղափարախոսությունը: Հաջողությունները և դրանց հետևանքները: (Խմբային աշխատանք)	Հոկտեմբեր ամիս, երկրորդ շաբաթ	Նախատեսվում է ուսումնասիրել Խալեդ Հոսեյնի «Օդապարուկ թռցնողը», «Հազար հիասքանչ արև», «Եվ արձագանքեցին լեռները» ստեղծագործությունները: Կատարել քննարկում:
25.	Հայկական հարց	Տերմինի առաջացումը: Արդիականությունը: (Կարինե Օհանյան)	Հոկտեմբեր ամիս, չորրորդ շաբաթ	Նախատեսվում է իրականացնել խորքային ուսումնասիրություն՝ ինչպե՞ս առաջացավ տերմինը, ի՞նչ նպատակ է այն հետապնդում, այժմ կա՞ այն:
26.	Առաջին և Երկրորդ աշխարհամարտեր, Հայրենական պատերազմ	Դրդապատճառները: Ռազմական գործողությունները: Հետևանքները: (Գոհար Գևորգյան)	Նոյեմբեր ամիս, առաջին շաբաթ	Նախատեսվում է ուսումնասիրել դրդապատճառները, ռազմական գործողությունների ողջ ընթացքը, ինչպես նաև հետևանքները:
27.	Գարեգին Նժդեհի կերպարի զուգահեռները մերօրյա գրականության մեջ	« Որդիների պայքարը հայրերի դէմ » , « Բաց նամակ հայ մտաորականութեան », «Ցեղի ոգու շարժը » (Խմբային աշխատանք)	Նոյեմբեր ամիս, երրորդ շաբաթ	Ընթերցել երկերը և իրականացնել քննարկում:
28.	Ժամանակակից Թուրքիա	Ներքին կյանքը: Արտաքին կյանքը: Մարտահրավերներն ու խնդիրները: (Մերի Բեգինյան)	Դեկտեմբեր ամիս, առաջին շաբաթ	Նախատեսվում է ուսումնասիրել Թուրքիայի ներքին ու արտաքին դրությունը, վարած քաղաքականությունը, պետության առջև ծառացած խնդիրները:
29.	Հայկական Սփյուռք	Կազմավորումը և մինչև մեր օրերի պատմությունը	Դեկտեմբեր ամիս, երրորդ	Նախատեսվում է ուսումնասիրել ձևավորումը,

		(Հասմիկ Մարգարյան)	շաբաթ	բաշխվածությունը, նրանց դրությունն ու Հայաստանի հետ կապը:
30.	Ամփոփում	Կինոդիտում և քննարկում	Դեկտեմբեր ամիս, երրորդ շաբաթ	Կդիտենք հայկական ոգուն համահունչ ֆիլմ, որից հետո կամփոփենք կիսամյակը: Ֆիլմի ընտրությունը կիրականացնենք ընթացքում:
31.	Համագործակցություն « Տուրիզմի ակումբի » հետ	Այցելություն Իջևանի պատմաերկրագիտական թանգարան		
32.	Համագործակցություն « Ֆրանսերենի ակումբի » հետ	Հայ-ֆրանսիական հարաբերություններ		Նախատեսվում է այցելություն Հայասատանում Ֆրանսիայի դեսպանատուն:
33.	Համագործակցություն « Բանասերների ակումբի » հետ	Գրքի քննարկում		
34.	Հնագիտական պեղումներ			
35.	Փորձի ձեռքբերում			Նախատեսվում է փորձի ձեռքբերում պետական որևէ կառույցում:
36.	Զրույց վերլուծաբանի հետ	« Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը »		Զրույց Մենուա Սողոմոնյանի հետ:
37.	Բանավեճ/ քննարկում	« 44-օրյա պատերազմի նախադրյալները և հետևանքները »		Նախատեսվում է իրականացնել մեծ բանավեճ, որին իրենց մասնակցությունը կունենան նաև ԵՊՀ ԻՄ-ի դասախոսները:
ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ				
38.	Էթիկա և էթիկետ	Հյուրասիրության և հյուրընկալության կանոններ	Սեպտեմբերի 3-րդ շաբաթ	Ծանոթացնել հյուրասիրության և հյուրընկալության գործընթացներին: Հետաքրքրաշաժ թեստի

				օգնությամբ իրականանել ստուգում:
39.	Կիրառական սոցոլոգիա	Տեղեկատվություն հավաքելու մեթոդներ	Սեպտեմբերի 4-րդ շաբաթ	Ծանոթացնել տեղեկատվության տեսակներին, տեղեկատվություն հավաքելու մեթոդներին
40.	Հոգեբանություն	Հույզերը և էմոցիաները մեր կյանքում	Հոկտեմբերի 1-ին շաբաթ	Սեմինար-քննարկում, Հոգեբանական թեստեր:
41.	Էթիկա և էթիկետ	Մոդան որպես երևույթ. դրա էությունը ու զարգացման միտումները	Հոկտեմբերի 3-րդ շաբաթ	Տալ տեղեկատվություն մոդայի՝ որպես երևույթի մասին, նրա էություան, զարգացման միտումների մասին
42.	Մանկական զարգացման հոգեբանություն	Ծնողների հետ իրականացվող աշխատանքներ	Նոյեմբերի 2-րդ շաբաթ	Ներկայացնել ծնողի հետ իրականցվող աշխատանքների տեսակները, դժվարությունները:
43.	Մեդիակրթություն	Մեդիակրթության դերը ժամանակակից կրթության ոլորտում	Նոյեմբերի 4-րդ շաբաթ	Ծանթոացնել մեդիակրթության գործառույթներին, նշանակությանը կրթության ոլորտում, դերը և կարևորությունը:
44.	Իրավունք	Երեխաների իրավունքները	Դեկտեմ բերի 2-րդ շաբաթ	Իրազեկել երեխայի կրթության մասին օրենքին:Իրականացնել քննարկում:
45.	Հոգեբանություն	Երեխան և դպրոցը	Դեկտեմ բերի 3-րդ շաբաթ	Ծանոթացնել երեխաների դպրոց հաճախելիս առաջացող դժվարություններին և դրանց առանձնահատկություններին:
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ				
46.	Ֆրանսերեն	Դիալոգներ, ասացվածք	16.09	Դասընթացին կամ սեմինարին

				նախատեսվում է լսել երկխոսություն,սովորել բառապաշար,սովորել ասացվածք:
47.	Ֆրանսերեն	Լսողական վարժություն, ասացվածք	30.09	Դասընթացին կամ սեմինարին նախատեսվում է լսել ձայնագրություն,պատասխանել հարցերին,սովորել բառապաշար և ասացվածք:
48.	Ֆրանսերեն	Կինոդիտում	14.10	Դասընթացին կամ սեմինարին նախատեսվում է ֆիլմի դիտում և քննարկում:
49.	Ֆրանսերեն	Երգի քննարկում,ասացվածք	28.10	Դասընթացին կամ սեմինարին նախատեսվում է երգի ունկնդրում,քննարկում,որի հիման վրա կսովորեն բառապաշար:
50.	Ֆրանսերեն	Դիալոգներ, ասացվածք	10.11	Դասընթացին կամ սեմինարին նախատեսվում է լսել երկխոսություն,սովորել բառապաշար,սովորել ասացվածք:
51.	Ֆրանսերեն	Լսողական վարժություն, ասացվածք	25.11	Դասընթացին կամ սեմինարին նախատեսվում է լսել ձայնագրություն,պատասխանել հարցերին,սովորել բառապաշար և ասացվածք:
52.	Ֆրանսերեն	Երգի քննարկում,ասացվածք	03.12	Դասընթացին կամ սեմինարին նախատեսվում է երգի ունկնդրում,քննարկում,որի հիման վրա կսովորեն բառապաշար:

53.	Ֆրանսերեն	Տեսահոլովակի դիտում, քննարկում, ասացվածք	14.12	Դասընթացին կամ սեմինարին նախատեսվում է տեսահոլովակի դիտում և քննարկում:
ՈՒԳԸ կենտրոնական կառույց				
54.	«Ինչպե՞ս գրել գիտական հոդված»		հոկտեմբեր -նոյեմբեր	Ուստարվա 2-րդ կիսամյակում նախատեսվում է կազմակերպել հանրապետական գիտաժողով: Ցանկալի է, որ մեր ուսանողները ևս ներգրավվեն: Կիրականացվի դասընթաց՝ թե ինչպես գրել գիտական հոդված: Նպատակն է ուսանողության շրջանում հոդվածներ գրելու մշակույթը զարգացնել և մրցույթ կազմակերպել նրանց շահագրգռելու համար:
55.	«Բանավեճի առաջնություն»		Սեպտեմ բեր- նոյեմբեր	Ուսանողական գիտական ընկերության ֆեյսբուքյան էջում կտեղադրենք մասնակցության հայտադիմումը: Արդյունքում հայտագրված թիմերը

				կանցնեն մեկօրյա որակավորման դասընթաց, որը կիրականցվի ոլորտի փորձառու մասնագետի կողմից: Այնուհետև կմեկնարկի մրցութային փուլը: Հաղթող և լավագույն թիմերը կպարգևատրվեն կրթական մրցանակներով: Նպատակն է ուսանողության շրջանում զարգացնել առաջնորդային և վերլուծական հմտությունները: Ուսանողները ձեռք կբերեն արդիական գիտելիքներ և ազդեցիկ ու կառուցվածքային կդարձնեն իրենց խոսքը:
56.	«Բանախոսությունների շարք»		Կիսամյակի ընթացքում	Համագործակցելով մասնաճյուղի բոլոր ամբիոնների հետ՝ կսկսվեն դասախոսների բանախոսությունների շարք արդիական, կրթական և հետաքրքիր թեմաների շուրջ: Նպատակն է դասախոսների բանախոսությունների շնորհիվ մասնաճյուղի

				ուսանողներին հնարավություն ընձեռնել իրենց մասնագիտական գիտելիքներից զատ, ձեռք բերել նաև այլ մասնագիտություններին առնչվող գիտելիքներ:
57.	«Հոդվածների մրցույթ»		Հոկտեմբեր -նոյեմբեր	«Ինչպե՞ս գրել գիտական հոդված» դասընթացից հետո կհայտարարվի հոդվածների մրցույթ: Նախատեսվում է լավագույն հոդվածներով հանդես եկած ուսանողների աշխատանքները տպագրել և խրախուսել կրթաթոշակով կամ այլ մրցանակով: Նպատակն է հոդվածներ գրելու հմտությունները զարգացնել և հետագայում կայանալիք գիտաժողովներում մեր ուսանողներին ևս ընդգրկել:
58.	Գրքի քննարկումների շարք		Կիսամյակի ընթացքում	Ինչպես նախորդ ուստարվա ընթացքում, այնպես էլ այս շրջանում կշարունակվեն գրքերի քննարկումներ: Նպատակն է ուսանողության շրջանում գեղարվեստական միտքը

				զարգացնել և սերտ համագործակցությունը պահպանել կենտրոնի հետ: